

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


«Կանանց և տղամարդկանց
հավասար իրավունքների և
հավասար հնարավորությունների
ապահովման մասին» ՀՀ օրենքի
վերաբերյալ

R E S E A R C H

On Law "On Provision of Equal
Rights and Equal Opportunities
for Women and Men"

Ընդդեմ կանանց նկատմամբ
բռնության կոալիցիա
Երևան 2017

Coalition to Stop Violence
against Women
Yerevan 2017





Ընդդեմ կանանց նկատմամբ
բռնության կոալիցիա
Coalition to stop violence
against women



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«Կանանց և տղամարդկանց հավասար
իրավունքների և հավասար հնարավորությունների
ապահովման մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ

RESEARCH

On Law "On Provision of Equal Rights and Equal
Opportunities for Women and Men"

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Երևան 2017

Coalition to Stop Violence against Women
Yerevan 2017

Սույն հետազոտությունն իրականացվել է Ընդդեմ կանանց սկստմամբ բռնության կոալիցիայի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Պայքարելով գենդերային բռնության դեմ Հայաստանում իրազեկվածության բարձրացման և ջատագովության միջոցով» ծրագրի շրջանակներում:

Հետազոտության հեղինակ՝

Նարինե Ալեքսանյան, Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

This research has been implemented by The Coalition to Stop Violence against Women in the frames of "Fighting against gender based violence in Armenia through awareness raising and advocacy" project supported by The Open Society Foundations – Armenia.

Author and translator of the research:

Narine Aleksanyan, PhD in Law, Associate Professor

SBN 978-9939-1-0363-1

© Ընդդեմ կանանց սկստմամբ բռնության կոալիցիա, 2017

ISBN 978-9939-1-0363-1

© Coalition to Stop Violence against Women, 2017

Բովանդակություն	
ՆԱԽԱԲԱՆ	9
Հետազոտության արդիականությունը	9
Հետազոտության մեթոդաբանությունը	9
1. «ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	10
1.1.«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի մշակման և ընդունման նորմատիվ իրավական հիմքը	10
1.2. Օրենքի մշակման գործընթացը	14
2. ՕՐԵՆՔԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	15
2.1. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կառուցվածքը և հակիրճ նկարագիրը	15
2.2. Պետության՝ գենդերային հավասարության ապահովման միջազգային պարտավորության բովանդակությունը և օրենսդրական հիմքի առանձնահատկությունները	16
2.3. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը՝ գենդերային հավասարության de jure ապահովման տեսանկյունից	19
2.4. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի փաստացի կիրառման վերլուծություն	27
3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	38
Հավելված 1. Գենդերային խտրականության դրսևորումների համար պատասխանատվության միջոցների վերաբերյալ (միջազգային օրենսդրական փորձ) 39	
Հավելված 2. Պետական մարմիններից ստացած պաշտոնական պատասխաններ.....	40
Հավելված 3. Գենդերային հավասարության հարցերով ազգային ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ	45
Հավելված 4. Տեղեկատվություն սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2014 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին	55
Հավելված 5. Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2015 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին.....	68
Հավելված 6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչները հաստատելու մասին» թիվ 34-Ա/1 հրաման	88

Table of Contents

INTRODUCTION	99
Actuality of research	99
Methodology of research.....	99
1. PROCESS OF DEVELOPMENT AND ADOPTION OF THE LAW "ON PROVISION OF EQUAL RIGHTS AND EQUAL OPPORTUNITIES FOR WOMEN AND MEN"	100
1.1. Normative legal basis for the development and adoption of the Law "On Provision of Equal Rights and Equal Opportunities for Women and Men"	100
1.2.Process of development of the law	103
2. LEGAL COMPARATIVE ANALYSIS OF LAW.....	104
2.1. The structure and brief introduction of the RA Law "On Provision of Equal Rights and Equal Opportunities for Women and Men"	104
2.2.The content of international obligation of the state to provide gender equality and the features of the legislative base.....	104
2.3. Analysis of the RA Law "On Provision of Equal Rights and Equal Opportunities for Women and Men" from the aspect of provision of de jure equality.....	107
2.4.Analysis of practical implementation of the RA Law "On Provision of Equal Rights and Equal Opportunities for Women and Men".....	112
3. CONCLUSIONS	120
4. RECOMMENDATIONS	121
APPENDIX 1. Sanctions for gender discrimination(International legislative experience) ...	122
APPENDIX 2. Official responses of state authorities (Unofficial translation from Armenian)	123
APPENDIX 3. National institutional mechanisms for gender equality	128

ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտության արդիականությունը

Գենդերային հավասարությունը, որպես հիմնարար սկզբունք, մարդու իրավունքների անբաժանելի մասն է և հանդիսանում է ժողովրդավարական պետության հիմնարար հատկանիշներից մեկը: Գենդերային հավասարություն նշանակում է հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար, որն ապահովված է ինչպես իրավական ակտերում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում:

Գենդերային հավասարության վերաբերյալ արդյունավետ օրենսդրությունն էական նշանակություն ունի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, ինչպես նաև սեռի հիմքով խտրականության դրսևորումները կանխելու համար: Գենդերային հավասարության օրենսդրությունը պետք է ապահովի, որ բոլոր քաղաքականությունների մշակման ժամանակ հավասարապես հաշվի առնվեն տղամարդկանց և կանանց իրավունքներն ու շահերը: Վերջին տասնամյակներում բազմաթիվ պետություններ, ընդունելով համապատասխան նորմատիվ իրավական ակտեր, միջոցներ են ձեռնարկել կանանց և տղամարդկանց միջև ֆորմալ (de jure) հավասարությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը շարունակում է գոյություն ունենալ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունը 2013 թ. մայիսի 20-ին ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը: Վերջինս կարևոր իրավական փաստաթուղթ է սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի նյութաիրավական բազան ապահովելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, գենդերային խտրականությունը շարունակում է մնալ մեր հասարակության խնդրահարույց հարցերից մեկը:

Սույն իրավական-հետազոտական վերլուծության նպատակն է իրականացնել համապարփակ ուսումնասիրություն «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դրույթների և դրանց կիրառման վերաբերյալ՝ վեր հանելով իրավական բացերն ու խնդիրները: Վերլուծության արդյունքում կատարվել են առաջարկություններ՝ օրենսդրության և դրանով պայմանավորված իրավակիրառ պրակտիկայի բարելավման ուղղությամբ, որոնք կարող են օգտակար լինել ոլորտի քաղաքականությունը մշակող դերակատարների և որոշում կայացնող մարմինների համար:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է իրավահամեմատական մեթոդաբանության հիման վրա, որի շրջանակներում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դրույթները վերլուծության են ենթարկվել ՀՀ միջազգային պարտավորությունների, միջազգային չափանիշների և լավագույն փորձի հետ համադրման ու համեմատության արդյունքում: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վերլուծության ընթացքում օգտագործվել է նաև օրենսդրական նորմերի իրավակիրառ պրակտիկայի հետազոտման, վերլուծության և իրավական գնահատման մեթոդաբանությունը:

1. «ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐՂԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.1. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի մշակման և ընդունման նորմատիվ իրավական հիմքը

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը մշակվել և ընդունվել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի և ներպետական իրավական ակտերի հիման վրա:

Միջազգային փաստաթղթեր: Կանանց իրավունքների պաշտպանության և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հետ կապված ՀՀ միջազգային պարտավորությունները սահմանված են հետևյալ միջազգային իրավական փաստաթղթերով.

1. ՄԱԿ-ի 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրեր (Հայաստանը միացել է 1993թ.-ին), որոնք պարտավորեցնում են մասնակից պետություններին ապահովել տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքը՝ օգտվելու դաշնագրերով նախատեսված քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային բոլոր իրավունքներից¹:

2. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (Հայաստանը միացել է 1993թ.-ին), որի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը պարտավորվում է (ա) տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իր ազգային սահմանադրությունում կամ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այն դեռևս ամրագրված չէ, և օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը, (բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ՝ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են, (գ) սահմանել տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց իրավունքների իրավական պաշտպանություն և իրավասու ներպետական ատյանների ու պետական այլ հաստատությունների օգնությամբ ապահովել կանանց պաշտպանությունն ընդդեմ խտրականության ցանկացած գործողության, (դ) ձեռնպահ մնալ կանանց նկատմամբ խտրականության որևէ գործողության կամ պրակտիկայի մեջ ներգրավվելուց և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները կգործեն այդ պարտավորությանը համապատասխան, (ե) ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու համար ցանկացած անձի, կազմակերպության կամ ձեռնարկության կողմից կանանց նկատմամբ դրսևորվող խտրականությունը, (զ) ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝

¹ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, 3-րդ հոդված, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիր, 3-րդ հոդված

փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ, (է) վերացնել ներպետական քրեական օրենսդրության բոլոր այն դրույթները, որոնք խտրականություն են ներկայացնում կանանց նկատմամբ²:

3. ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա (Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2008թ.-ին), որը սահմանում է տղամարդկանց հետ հավասար հիմունքներով, առանց խտրականության բոլոր ընտրություններում քվեարկելու, ազգային օրենսդրությամբ սահմանված բոլոր հանրորեն ընտրովի մարմիններում ընտրվելու և պետական պաշտոններ զբաղեցնելու կանանց իրավունքները³:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2010թ.-ի հոկտեմբերի 22-ին), որի 6-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, և այս նպատակով միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար նրանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիակատար և հավասար օգտվելը⁴:

5. ԵՆՍ 1950 թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որի 14-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ապահովեն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն առանց խտրականության՝ անկախ սեռից⁵:

6. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 12 Արձանագրություն (Նոյեմբերի 4, 2000թ., Հռոմ), որով խտրականության դեմ արգելքը տարածվում է օրենքով սահմանված ցանկացած իրավունքի վրա⁶:

7. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա (Հայաստանը միացել է 2004թ.-ին), որի 20-րդ հոդվածի համաձայն՝ առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով մասնակից պետությունը պարտավորվում է ճանաչել այդ իրավունքը և համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու կամ խթանելու դրա կիրառումը: Բացի այդ, Խարտիայի 5-րդ մասի Ե հոդվածն ամրագրում է խտրականության դեմ արգելքը՝ կապված դրանում ամրագրված իրավունքների իրացման հետ⁷:

8. ԵՆ 2005թ. «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի մասին» կոնվենցիա (Հայաստանի համար ուժի մեջ է մտել 2008թ.-ին), որի 3-րդ հոդվածն ամրագրում է, inter alia, գենդերային խտրականության բացառման սկզբունքը կոնվենցիայի դրույթներն իրականացնելիս⁸:

2. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505>

3. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75463>

4. http://www.un.org/res/UN%20Treaties/III_15.pdf

5. <http://static.echr.am/pdf/ae89a53545a8475a239b0db8114a52cc.pdf>

6. <http://static.echr.am/pdf/ae89a53545a8475a239b0db8114a52cc.pdf>

7. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230>

8. <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/Beijing%20full%20report%20E.pdf>

9. 1995թ. Պեկինի Կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Հռչակագրի և գործողությունների պլան, որոնք հաստատում են, որ կանանց իրավունքները կազմում են մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, անքակտելի և անբաժանելի մասը, և որ կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը հանդիսանում է սոցիալական արդարության նախապայման ⁹:

10. ԵՆ նախարարների կոմիտեի մի շարք հանձնարարականներ («ԶԼՄ ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության մասին» թիվ R(84)17 հանձնարարական¹⁰, «Սեռի հիմքով խտրականության դեմ իրավական պաշտպանության մասին» թիվ R(85)2 հանձնարարական¹¹, «Ընտանիքում բռնության մասին» թիվ R(85)4 հանձնարարական¹², «Մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքի համատեղման մասին» թիվ R(96)5 հանձնարարական¹³, «Կանանց և տղամարդկանց հավասարության խնդրին համալիր մոտեցման մասին» թիվ R(98)14 հանձնարարական¹⁴, «Բռնությունից կանանց պաշտպանելու մասին» թիվ R(2002)5 հանձնարարական¹⁵, «Քաղաքական և հասարակական որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» թիվ R(2003)3 հանձնարարական¹⁶, «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարական ¹⁷), որոնցում իրենց հետագա մանրամասնեցումն ու զարգացումն են ստանում կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ չափանիշները:

11. Եվրոպայի Խորհրդի Գենդերային հավասարության վերաբերյալ 2014-2017թթ. ռազմավարություն¹⁸, որն առանձնացնում է հինգ ռազմավարական նպատակ գենդերային հավասարության ոլորտում:

12. Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբի 2015թ. ապրիլի 3-ի զեկույցը Համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ, որի 120.53- 120.70 կետերում ներկայացված է Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարին ուղղված անհրաժեշտ օրենսդրական միջոցառումների իրականացման և գենդերային հավասարության ապահովմանն ուղղված օրենքի կիրառման անհրաժեշտությունը ¹⁹:

Ներպետական իրավական ակտեր: «Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման ներպետական իրավական հիմքը սահմանված էր հետևյալ նորմատիվ իրավական ակտերով.

1. 2005թ. փոփոխություններով ՀՀ սահմանադրություն, որի 14.1 հոդվածի

9. <http://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/Beijing%20full%20report%20E.pdf>

10. <https://rm.coe.int/16804ec678>

11. <https://rm.coe.int/168058ff43>

12. <https://rm.coe.int/16804d4ea1>

13. <https://rm.coe.int/16804d4ea1>

14. <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=1497046&SecMode=1&DocId=491098&Usage=2>

15. <http://www.legislationline.org/documents/action/popup/id/7972>

16. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805e0848

17. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d4aa3

18. <https://rm.coe.int/1680590174>

19. <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/076/18/PDF/G1507618.pdf>

համաձայն բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը՝ կախված սեռից արգելվում է ²⁰:

2. ՀՀ քրեական օրենսգիրք, որի 143 հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու համար ²¹:

3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, որը սահմանում է գենդերային հավասարությունը որպես աշխատանքային օրենսդրության սկզբունք և ամրագրում է, որ տղամարդիկ և կանայք պետք է ստանան նույն չափով աշխատավարձ՝ միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց: Աշխատանքային օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն ²²:

4. 2009թ.-ին ՀՀ կառավարությունը մշակել է **Գենդերային հավասարության հայեցակարգ**²³, որը նկարագրում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման պետական քաղաքականությունը: Հայեցակարգը ներառում է սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային չափանիշների ներդրման նախնական, ինչպես նաև որոշումների կայացման, տնտեսական բարեփոխումների, կրթության և առողջապահության ոլորտներում գենդերային քաղաքականության բարելավման նպատակներին արձագանքելու, մարդկանց թրաֆիքինգի և գենդերային բռնության խնդիրների հասցեագրման ռազմավարություն:

5. Հայաստանի Հանրապետության 2011-2015թթ. **Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիր**²⁴, որը հասցեագրում է հայեցակարգում սահմանված բոլոր ոլորտները և նախանշում հատուկ նպատակներ՝ յուրաքանչյուր ոլորտի համար: Թեև Գործողությունների ծրագիրը չի սահմանում գենդերային մեյնսթրիմինգի մոտեցում, այն պահանջում է ինտեգրել «գենդերային բաղադրիչը երկրի քաղաքական և տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերում և ներդնել մեխանիզմ սոցիալ-տնտեսական ծրագրերի և նախագծերի գենդերային տեսանկյունից փորձաքննության համար»: Գործողությունների ծրագիրը նաև նախատեսում է գենդերի ինտեգրումը բյուջետավորման և պլանավորման գործընթացներին, ինչպես նաև գենդերային բյուջետավորման աստիճանական կիրառումը բյուջետային ցիկլի տարբեր փուլերում:

20. <http://concourt.am/armenian/constitutions/index2005.htm>, հարկ է նշել, որ 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ սահմանադրությամբ, ի լրումն սեռի հիմքով խտրականության արգելքին (29-րդ հոդված), կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն առանձին ամրագրվել է 30-րդ հոդվածում, <http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>, բացի այդ, 2015թ. սահմանադրության 86-րդ հոդվածով կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը սահմանվել է որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության նպատակներից մեկը:

21. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113216>

22. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107116> , 3-րդ հոդված, 178-րդ հոդվածի 2-րդ մաս, 180-րդ հոդվածի 3-րդ մաս

23. Հայաստանի Հանրապետության կառավարություն, 2010թ., Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգ, Երևան

24. Հայաստանի Հանրապետության կառավարություն, 2011թ., Հայաստանի Հանրապետության 2011-2015 թթ. գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիր, Երևան:

1.2. Օրենքի մշակման գործընթացը

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի մշակման նախաձեռնությամբ հանդես է եկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ԱԺ պատգամավոր Հեղինե Բիշարյանը: Նախագիծը ներկայացվել է ԱԺ 02.12.2011թ.: Մինչև ԱԺ պատգամավորի և ՀՀ կառավարության կողմից ներկայացված միասնական օրինագծի շրջանառությունը մինևույն կարգավորման առարկայի վերաբերյալ մշակվել են առանձին նախագծեր: Մասնավորապես, ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյանի և Հովհաննես Մարգարյանի կողմից 09.01.2009թ. ներկայացվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը չի ընդգրկվել ԱԺ նստաշրջանի օրակարգ: Այնուհետև, 12.10.2011թ. ՀՀ կառավարությունը ներկայացրել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ²⁵:

25. http://parliament.am/draft_history.php?id=5217&lang=arm

2. ՕՐԵՆՔԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի²⁶ կառուցվածքը և հակիրճ նկարագիրը

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածները սահմանում են օրենքի նպատակն ու խնդիրները, օրենքում օգտագործվող հասկացությունները և գենդերային հավասարության քաղաքականության սկզբունքները:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է ուղղակի և անուղղակի գենդերային խտրականության արգելքը հասարակական կյանքի ոլորտներում և նախատեսում ուղղակի խտրականության և անուղղակի խտրականության ձևերը: Բացի այդ, նույն հոդվածը սահմանում է այն դեպքերը, որոնք չեն կարող համարվել գենդերային խտրականություն:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլուխը նվիրված է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությանը, դրա իրագործման մշտադիտարկմանը և գենդերային վիճակագրությանը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլուխը սահմանում է գենդերային հավասարության երաշխիքները կառավարման և հանրային ծառայության մեջ:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը կարգավորում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը ՀՀ կառավարության, պետական լիազոր մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Բացի այդ, սույն գլուխը կարգավորում է քաղաքացիական հասարակության աջակցությունը գենդերային հավասարության ապահովմանը և նորմատիվ իրավական ակտերի գենդերային փորձաքննությունը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը սահմանում է օրենքի կատարման իրավական երաշխիքները, իսկ 6-րդ գլուխը կարգավորում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորման հետ կապված իրավահարաբերությունները:

26. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

2.2. Պետության՝ գենդերային հավասարության ապահովման միջազգային պարտավորության բովանդակությունը և օրենսդրական հիմքի առանձնահատկությունները

Համաձայն ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի թիվ 28 Ընդհանուր հանձնարարականի²⁷ պետությունները պետք է բոլոր ասպեկտներով կատարեն կանանց՝ խտրականության չենթարկվելու և հավասարության իրավունքը հարգելու, պաշտպանելու և իրականացնելու Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտականությունները: Հարգելու պարտականությունն անդամ պետություններից պահանջում է գերծմնալ այնպիսի օրենքների, քաղաքականությունների, կարգավորումների, ծրագրերի, վարչական ընթացակարգերի և ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծումից, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում են կանանց կողմից իրենց քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հավասար պայմաններում իրականացնելու հնարավորության մերժմանը: Պաշտպանելու պարտականությունը պահանջում է անդամ պետություններից պաշտպանել կանանց՝ մասնավոր դերակատարների կողմից խտրականության ենթարկվելուց և միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղակիորեն ուղղված են այնպիսի սովորութային կամ այլ պրակտիկայի վերացմանը, որը նախադրյալ է հանդիսանում սեռերի՝ միմյանց նկատմամբ գերակայության և ենթակայության և կանանց ու տղամարդկանց կարծրատիպային դերերի սահմանման համար կամ դրանք դարձնում է շարունակական: Իրականացնելու պարտականությունը պահանջում է անդամ պետություններից ձեռնարկել տարաբնույթ միջոցներ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները de jure և de facto ապահովելու համար, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում հատուկ միջոցների ձեռնարկումը Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի համաձայն: Սա ներառում է միջոցների կամ վարքագծի հետ կապված պարտականություն և արդյունքների հետ կապված պարտականություն:

Թիվ 28 Ընդհանուր հանձնարարականի 10-րդ կետի համաձայն՝²⁸անդամ պետությունները պարտավոր են թույլ չտալ կանանց նկատմամբ խտրականության դեպքերի առաջացում իրենց գործողությունների կամ անգործության արդյունքում, նրանք պարտավոր են ակտիվորեն արձագանքել կանանց նկատմամբ խտրականության դեպքերին՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գործողությունները կամ անգործությունը կատարվել են պետական, թե՛ մասնավոր դերակատարների կողմից:

Պետության վերոնշյալ միջազգային պարտականությունների կատարման կարևոր հիմքը կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանն ուղղված իրավական հիմքի ստեղծումն է, որը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին:

ԵՄ Նախարարների կոմիտեի «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարականում²⁹ ներկայացված են այն չափանիշներն ու սկզբունքները, որոնք պետությունները

27. <http://www2.ohchr.org/english/bodies/cedaw/docs/CEDAW-C-2010-47-GC2.pdf> , 8-13-րդ կետերը

28. Տե՛ս նույն տեղում

29. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d4aa3

պետք է հաշվի առնեն գենդերային հավասարության պրակտիկ կիրառմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելիս կամ իրականացնելիս: Մասնավորապես, սույն հանձնարարականի 5-րդ կետի համաձայն՝ կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ ներպետական օրենսդրությունը խիստ կարևոր է արդյունավետ քաղաքականության իրականացման համար, որը պետք է միտված լինի գենդերային հավասարության նպաստմանը և սեռի հիմքով խտրականության նվազեցմանը: Օրենսդրական համապատասխան բազան նաև հանդիսանում է գենդերային հավասարության վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման հիմնական գործիքը:

Պետությունները պարտավոր են ընդունել գենդերային հավասարության վերաբերյալ արդյունավետ ներպետական օրենսդրություն և արդյունավետ կերպով կիրառել այն, ինչպես նաև ընդգրկել գենդերային հավասարության բաղադրիչը կառավարման բոլոր ոլորտներում՝ ինչպես օրենքների, այնպես էլ քաղաքականությունների մակարդակում³⁰: Պետության այս պարտավորության հետ կապված քաղաքական կամքի և հանձնառության բաղադրիչներն են՝

- i. սեռի հիմքով խտրականության արգելքի ու կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի ներառումը սահմանադրություններում և այլ հիմնարար օրենքներում,
- ii. կյանքի բոլոր ասպեկտներում և հասարակության բոլոր ոլորտներում սեռի հիմքով խտրականությունն արգելող օրենսդրության ընդունում/առկայություն, որն ապահովում է de jure գենդերային հավասարությունը, ներառյալ՝ օրենքի խախտման դեպքում արդյունավետ սանկցիաների կիրառումը,
- iii. կառուցվածքային կամ պատմական խտրականության ազդեցությունները հաղթահարելու և de facto հավասարության հասնելու նպատակով պոզիտիվ գործողությունների/ժամանակավոր հատուկ միջոցների օգտագործումը թույլատրող օրենսդրության ընդունում/առկայություն,
- iv. բոլոր ներպետական օրենքների կանոնավոր և համակարգային հետազոտության մեխանիզմների ընդունում/առկայություն, որը պետք է բացառի սեռի հիմքով ուղղակի կամ անուղղակի խտրականություն սահմանող որևէ դրույթի ընդունումը կամ պահպանումը գործող օրենսդրության մեջ,
- v. գենդերային հավասարության վերաբերյալ օրենսդրության կիրառման հատուկ ինստիտուցիոնալ մեխանիզմների հիմնումը/առկայությունը,
- vi. գենդերային հավասարության վերաբերյալ նորմերի ենթադրյալ խախտման հետևանքով տուժած անձանց կամ խմբերի բողոքների ընդունման լիազորություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների հիմնումը/առկայությունը: Այսպիսի մեխանիզմ ներկայացված բողոքը կամ դրա հետ կապված հետազոտ կարծիքը չպետք է խոչընդոտի դատարանների կողմից այդ հարցի հետազոտ քննությանը,
- vii. բոլոր ոլորտներում օրենքների և քաղաքականությունների մշակման մեջ գենդերային հավասարության բաղադրիչի ընդգրկման վերաբերյալ ուղեցույցների ընդունում/առկայություն և իրականացում³¹:

30. Տե՛ս նույն տեղում, կետ 14

31. Տե՛ս նույն տեղում

Գենդերային հավասարության ապահովումը պետության կողմից միջազգային փաստաթղթերում³² դիտարկվում է երկու տեսանկյունից.

1. Գենդերային հավասարության de jure ապահովում,
2. Գենդերային հավասարության de facto ապահովում:

De jure գենդերային հավասարությունը, որն այլ կերպ կոչվում է *ֆորմալ գենդերային հավասարություն*, նշանակում է, որ սահմանադրությունը և/կամ ներպետական օրենսդրությունն ապահովում են կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը, մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար ճանաչումն ու իրականացումը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունքի և նրանց համար հավասար հնարավորությունների ապահովման միջոցներ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և այլ ոլորտներում³³:

De facto գենդերային հավասարությունը, որը հայտնի է նաև որպես *սուբստանտիվ կամ փաստացի հավասարություն*, նշանակում է, որ օրենքում ամրագրված գենդերային հավասարությունը, կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններն ու նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը լրացվում են ազդեցության և վերջնարդյունքի հավասարությամբ³⁴:

Պետության կողմից de facto գենդերային հավասարության ապահովումը նշանակում է օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի միջև համապատասխանության ապահովում: Սուբստանտիվ հավասարության հասնելու արդյունավետ միջոցը սահմանված սկզբունքների ու չափանիշների իրականացման ապահովումն է, որը ներառում է նաև այդ գործընթացների կանոնավոր մշտադիտարկումն ու գնահատումը³⁵:

Ըստ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի 3-րդ հոդվածը նշանակում է, որ կանայք և տղամարդիկ պետք է իրականացնեն դաշնագրով սահմանված իրենց իրավունքները հավասար հիմունքներով, և այս գաղափարն ունի խիստ կարևոր նշանակություն: Ֆորմալ հավասարությունը կարող է իր արտահայտությունը գտնել սահմանադրական դրույթներում, օրենքներում և կառավարության քաղաքականություններում, բացի այդ, 3-րդ հոդվածը վերաբերում է պրակտիկայում կանանց և տղամարդկանց կողմից դաշնագրով սահմանված իրավունքների հավասար իրականացմանը: De jure և de facto հավասարությունը տարբեր, սակայն միաժամանակ փոխկապակցված հասկացություններ են: De jure հավասարությունը նշանակում է, որ հավասարությունն ապահովված է, եթե օրենսդրական ակտերը կամ քաղաքականությունները չեզոքություն են դրսևորում կանանց և տղամարդ-

32. ԵՄ Նախարարների կոմիտեի «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարական, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի թիվ 28 Ընդհանուր հանձնարարական, կետ 9, 1995թ. Պեկինի Կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Հռչակագրի և գործողությունների պլան, կետ 219 և այլն

33. <http://eige.europa.eu/rdc/thesaurus/terms/1440>

34. <http://eige.europa.eu/rdc/thesaurus/terms/1401>

35. ԵՄ «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարական, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d4aa3

կանց նկատմամբ:

Կանանց և տղամարդկանց սուբստանտիվ հավասարությունը չի կարող ապահովվել միայն գենդերային տեսանկյունից չեզոք օրենքների կամ քաղաքականությունների ընդունմամբ: Երրորդ հոդվածն իրականացնելիս պետությունները պետք է հաշվի առնեն, որ այդ օրենքները, քաղաքականությունները կամ իրավակիրառ պրակտիկան կարող են պատշաճ կերպով չհասցեագրել կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը, քանի որ դրանք ընդունելիս հաշվի չեն առնվել առկա տնտեսական, սոցիալական և մշակութային անհավասարությունները³⁶:

2.3. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը՝ գենդերային հավասարության de jure ապահովման տեսանկյունից

Գենդերային հավասարության սկզբունքը հիմնարար նշանակություն ունի մարդու իրավունքների իրականացման համար: Այդ սկզբունքի խախտումը հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների, քանի որ գործնականում զրկում է իրավասությունները (կնոջը կամ տղամարդուն) իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Գենդերային խտրականությունը հանգեցնում է կանանց նկատմամբ բռնության, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի խախտման, կրթության իրավունքի խախտման, սեռի հիմքով հղիության արհեստական ընդհատումների և այլն:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) գենդերային հավասարության de jure ապահովման տեսանկյունից վերլուծելու և դրա իրավակարգավորումներին իրավական գնահատականներ տալու համար հիմք են ընդունվել 2.1 կետում ներկայացված միջազգային չափանիշները, որոնք սահմանված են ԵԽ «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարականում որպես պետության՝ գենդերային հավասարության վերաբերյալ օրենսդրության ընդունման և դրա արդյունավետ իրականացման միջազգային պարտավորության գնահատման հիմք:

Ելնելով վերոգրյալից՝ Օրենքի վերլուծության շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք Օրենքն արգելում է գենդերային խտրականության բոլոր ձևերը, որոնք կարող են դրսևորվել քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Օրենքի 6-րդ հոդվածն արգելում է ուղղակի ու անուղղակի գենդերային խտրականությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Նույն հոդվածն այսուհետև սահմանում է ուղղակի և անուղղակի գենդերային խտրականության հետևյալ ձևերը.

36. Տնտեսական, սոցիալական և մշակութային հարցերով կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16, Հոդված 3. Կանանց և տղամարդկանց՝ բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն իրականացնելու հավասար իրավունքը (Երեսուներինգերորդ նստաշրջան, 2005թ.), U.N. Doc. E/C.12/2005/3 (2005), կետեր 6-9, <http://hrlibrary.umn.edu/gencomm/escgencom16.html>

- 1) ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը.
- 2) միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով.
- 3) սեռական ոտնձգությունը.
- 4) երբ անձը սեռի հատկանիշով ենթարկվել, ենթարկվում կամ կարող է ենթարկվել առավել վատ կամ անբարենպաստ վերաբերմունքի միևնույն կամ նմանատիպ իրավիճակում.
- 5) գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով.
- 6) այնպիսի պայմանների հաստատումը, պահանջների ներկայացումը, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել բացասական հետևանքներ՝ որոշակի սեռի անձանց վնաս պատճառելու ձևով.
- 7) անձի վերաբերյալ սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություն անելը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Թեև Օրենքում ուղղակի և անուղղակի խտրականության արգելքը սահմանված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այնուամենայնիվ, խտրականության տարաբնույթ դրսևորումները, ըստ համապատասխան ոլորտների (բացառությամբ պետության կառավարման ու հանրային ծառայության ոլորտի³⁷⁾՝ իրավական լիարժեք կարգավորման ենթարկված չեն:

Օրենքով սահմանված չեն խտրականության այնպիսի ձևերի հասկացություններ, ինչպիսիք են ասոցացված խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը և վիկտիմիզացիան (զոհայնացում), որը պայմանավորված է նաև ՀՀ-ում Խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքի բացակայությամբ³⁸: Վերոնշյալի համատեքստում Օրենքի դրույթների համակարգային և համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային խտրականության բոլոր դրսևորումները լիարժեք սահմանված չեն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային

370 Մասնավորապես, Օրենքի 3-րդ գլխում անդրադարձ է կատարված միայն պետության կառավարման և հանրային ծառայության մեջ գենդերային հավասարության երաշխիքներին: Մասնավորապես, 11-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրենց իրավասության սահմաններում խորհրդակցական, աշխատանքային մարմիններ, պատվիրակություններ, ընտրական հանձնաժողովներ, օրենքով սահմանված դեպքերում քվոտաներով և կոլեգիալության սկզբունքով այլ մարմիններ կազմավորելիս կամ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններում նշանակվելու համար թեկնածություններ առաջարկելիս բացառում են գենդերային խտրականության դրսևորումները: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի՝ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին մասնակցելիս: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կանայք և տղամարդիկ հանրային ծառայության ընդունվելու և մասնագիտական գործունեություն իրականացնելու համար ունեն հավասար իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և հավասար հնարավորություններ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել կանանց և տղամարդկանց՝ հանրային ծառայության ընդունվելու հավասար հնարավորություններ՝ իրենց ընդունակություններին և մասնագիտական պատրաստվածությամբ համապատասխան:

38. Այս հասկացությունների սահմանումների, ինչպես նաև ՀՀ-ում Հավասարության մասին կամ Խտրականության

հավասարության հարցեր կարգավորող օրենքներն անդրադառնում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ մանրամասն կարգավորելով դրանցից յուրաքանչյուրում գենդերային հավասարության հարցերը: Այդ ոլորտների շարքին են դասվում աշխատանքը (զբաղվածությունը), կրթությունը, գիտությունը, սպառողների պաշտպանությունը, սոցիալական ապահովությունը, սպորտը, առողջապահությունը և այլն³⁹:

Այսպես, զբաղվածության ոլորտում սեռի հիմքով խտրականության որոշ դրսևորումներ իրենց ամրագրումը չեն ստացել Օրենքում: Օրինակ, աշխատանքային ոլորտում սեռի հիմքով խտրականության հետ կապված, օրենքն արգելում է միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով: Մինչդեռ աշխատանքային ոլորտում առկա են նաև խտրականության այլ դրսևորումներ, որոնք իրավական կարգավորման ենթարկված չեն: Օրինակ, մեր պրակտիկայում շատ հաճախ հանդիպող աշխատանքի խտրական հայտարարությունները (որոնք կոնկրետ աշխատատեղը զբաղեցնելու համար նախապատվություն են տալիս որևէ (իգական կամ արական) սեռին, կամ որոնք սահմանում են աշխատանքին ոչ ներհատուկ պահանջներ (օրինակ՝ բարետես արտաքին կամ որոշակի տարիքային միջակայք) կամ աշխատանքի համար դիմող անձանցից իրենց ընտանեկան վիճակի, մասնավոր կյանքի կամ ընտանեկան պլանների մասին տեղեկատվություն պահանջելը (ամուսնացած կամ ամուրի լինելը, մոտ ապագայում ամուսնանալու կամ երեխա ունենալու պլաններ ունենալը) և այլն: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, օրենսդրական կարգավորման չի ենթարկվել նաև հետապնդումը⁴⁰, որն առավել հաճախ դրսևորվում է հենց աշխատանքի վայրում:

Օրենքում տեղ չեն գտել նաև աշխատանքային ոլորտում սեռի հիմքով խտրականության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սեռի հիմքով խտրականությունը աշխատանքի ընդունելիս կամ աշխատանքից ազատելիս, կրթության և ուսումնառության աջակցմանն ուղղված կրթաթոշակների տրամադրման համար սեռի հիմքով խտրական պայմաններ սահմանելը, սոցիալական ապահովության համակարգերից օգտվելու համար սեռի հիմքով խտրական պայմաններ սահմանելը և այլն:

Հարկ է նշել, որ աշխատանքային ոլորտում գենդերային խտրականության դրսևորումները հատուկ օրենսդրական կարգավորման են ենթարկվում եվրոպական պետությունների համապատասխան օրենսդրական ակտերով: Ընդ որում՝ որոշ պետություններ ընդունել են աշխատանքային ոլորտում

բացառման մասին համապարփակ օրենքի ընդունման անհրաժեշտության մասին մանրամասն տես Ա. Ղազարյան, Վ. Գրիգորյան, «Արդյո՞ք անհրաժեշտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը», իրավագիտական հետազոտություն, Երևան, 2015, http://am.epfarmeria.am/wp-content/uploads/2014/07/Research-Armenian_21.05.15.pdf

39. Օրինակ՝ Վրաստանի օրենքը գենդերային հավասարության մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://legislationline.org/topics/country/29/topic/7>, Բուսնիայի և Հերցեգովինայի օրենքը գենդերային հավասարության մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://legislationline.org/topics/country/40/topic/7>:

40. Հետապնդումը (որի դրսևորումներից մեկը սեռական ոտնձգությունն է) անձին կատմամբ անցանկալի վերաբերմունք է, որի արդյունքում նրա շուրջ ստեղծվում է, կամ որին պատակն է նրա շուրջ ստեղծվել վերժողական, թշնամական, նվաստացուցիչ, վիրավորական միջավայր: Տես 1995թ. Պեկինի Կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովի կողմից ընդունված Հռչակագրի և գործողությունների պլան, 117, 178 և 180 կետեր:

հավասարության հարցերը կարգավորող առանձին օրենքներ ⁴¹:

Ի լրումն, Օրենքի կարգավորումներում նախատեսված չեն այն դեպքերը, երբ գենդերային խտրականության ենթարկվող անձինք խտրականության են ենթարկվում նաև ըստ այլ հատկանիշի (օրինակ՝ հաշմանդամության, ՄԻԱՎ-ով ապրելու հատկանիշ և այլն) հիմքով ⁴²:

Այսպիսով, Օրենքի ձևակերպումները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային խտրականության արգելքի վերաբերյալ չեն պարունակում սպառնիչ կարգավորումներ ինչպես խտրականության ձևերի, այնպես էլ արգելված դրսևորումների առումով: Հետևաբար, գենդերային հավասարության ապահովման իրավական հիմքը լիարժեք կերպով սահմանված չէ:

2. Արդյո՞ք Օրենքով սահմանված գենդերային խտրականության արգելքները խախտելու համար սահմանված է պատասխանատվության միջոց տվյալ կամ հարակից օրենքներում:

Սեռի հիմքով խտրականություն հանդիսացող ցանկացած դրսևորման՝ օրենքով արգելված լինելու փաստն անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է այդպիսի վարքագծի դրսևորումը դադարեցնելու համար: Արգելված վարքագծի դրսևորումը պետք է առաջացնի համապատասխան պատասխանատվություն, հակառակ դեպքում օրենսդրական արգելքը կունենա դեկլարատիվ բնույթ:

Գենդերային խտրականության իրավական հետևանքներն այդպիսի խտրականություն դրսևորած սուբյեկտի համար կարող են տարբեր լինել: Այսպես, ԵԽ Նախարարների կոմիտեի «Սեռի հիմքով խտրականության դեմ իրավական պաշտպանության մասին» թիվ R(85)2 հանձնարարականի V կետի համաձայն՝ գենդերային խտրականության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը պետք է պարունակի այնպիսի իրավական պաշտպանության միջոցներ և սանկցիաներ, որոնք արդյունավետ են խտրականության դեմ պայքարի համար, օրինակ՝ օգտագործելով հետևյալ տեսակներից մեկը կամ մի քանիսը.

Ա. խտրականությունը կանխարգելող որոշումներ (որոնք արգելում են խտրականությունը կամ պահանջում են դադարեցնել այն, պահանջում են որոշակի գործողության կատարում, վերացնում են խտրական բնույթ ունեցող որոշումը).

Բ. այդպիսի որոշումների չկատարման համար համապատասխան սանկցիաներ, վարչական և անհրաժեշտության դեպքում քրեական սանկցիաներ խտրական գործողությունը պատժելու համար (ինչպիսիք են, օրինակ, տուգանքը, լիցենզիայի կասեցումը, խտրականության դրսևորման հանրայնացումը).

Գ. խտրականության ենթարկված անձանց վնասների հատուցում ⁴³:

41. Օրինակ՝ Իռլանդիան (<http://legislationline.org/documents/action/popup/id/5314>)

42. ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների 9-րդ պարբերությունում (ընդ. 17-րդ նստաշրջանում (20 մարտ-12 ապրիլ 2017)) իր մտահոգությունն է հայտնել հաշմանդամությանը և գենդերին առնչվող ազգային օրենսդրությունում և քաղաքականություններում հաշմանդամություն ունեցող կանանց անդրադարձի բացակայության կապակցությամբ: Տե՛ս <http://disabilityinfo.am/wp-content/uploads/2017/04/Եզրափակիչ-դիտարկումներ-Հայաստանի-Նախնական-զեկույցի-վերաբերյալ.pdf>

43. <https://rm.coe.int/168058ff43>

Գենդերային խտրականության արգելքը խախտելու համար քննարկվող Օրենքը պատասխանատվության կոնկրետ միջոցներ/սանկցիաներ չի սահմանում: Գենդերային խտրականության համար սանկցիաների առկայությունը կամ բացակայությունը մեր օրենսդրական դաշտում գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև համապատասխան հարակից/ճյուղային օրենսդրական ակտերը:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային խտրականության որևէ դրսևորման համար որևէ քրեական պատիժ, վարչական տուգանք կամ պատասխանատվության այլ միջոց (օրինակ՝ նյութական կամ ոչ նյութական վնասի փոխհատուցում, լիցենզիայի կասեցում և այլն) սահմանված չէ:

ՀՀ օրենսդրական ակտերում սեռի հիմքով խտրականության վերաբերյալ նորմերը վերաբերում են խտրականության բացառման օրենսդրական արգելքին, որոնք կրում են ընդհանուր բնույթ և երբեմն հանդիսանում են իրավունքի սկզբունքի (օրենքի առջև բոլորի հավասարության, գործի քննության ընթացքում կողմերի հավասարության և այլն) դրսևորում: Գենդերային խտրականության դրսևորումների դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցներն իրավական կարգավորման ենթարկված չեն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել ընդունված պատասխանատվության միջոցներ են նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցումը (Ավստրիա, Բելգիա, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Լատվիա, Ֆրանսիա, Իտալիա և այլն), ինչպես նաև տուգանքները և վարչական պատասխանատվության միջոցները (Նորվեգիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Չեխիա և այլն)⁴⁴:

Այսպիսով, խնդրո առարկա Օրենքով արգելված խտրական դրսևորումները որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել գենդերային խտրականության արգելքը խախտած սուբյեկտի համար: Պատասխանատվության ենթարկելու օրենսդրական համապատասխան նյութաիրավական հիմքի բացակայության պարագայում գենդերային խտրականությունն արգելող նորմերը ձեռք են բերում դեկլարատիվ բնույթ:

3. Արդյո՞ք Օրենքով գենդերային խտրականության արդյունքում տուժած անձանց համար սահմանված են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ⁴⁵:

Օրենքի 19-րդ հոդվածը կարգավորում է գենդերային հավասարության խախտման հետևանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը՝ ըստ էության սահմանելով երեք իրավական պաշտպանության միջոց.

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց գենդերային հավասարության խախտման

44. Մանրամասն տե՛ս Հավելված 1. Գենդերային խտրականության դրսևորումների համար պատասխանատվության միջոցների վերաբերյալ միջազգային օրենսդրական փորձի մասին

45. Իրավական պաշտպանության միջոցները համարվում են կանանց՝ արդարության մատչելիության իրավունքի մի բաղադրիչը, որը էական նշանակություն ունի Կանանց Նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների իրացման համար: Այս մասին մանրամասն տե՛ս http://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_33_7767_E.pdf

փաստով դիմելու իրավունք

2. դատական պաշտպանության իրավունք

3. Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք:

Օրենքի կարգավորումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց գենդերային հավասարության խախտման փաստով դիմելու իրավունքի վերաբերյալ վերացական բնույթ է կրում, քանի որ այդ իրավունքի իրացման առումով իրավակարգավորումներն անորոշ են: Մասնավորապես, Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գենդերային խտրականության ենթարկված անձն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց դիմելու և օրենքով սահմանված ժամկետում պատասխան ստանալու իրավունք: Օրենքի կարգավորումները որևէ կերպ չեն մանրամասնում, թե ի՞նչ լիազորություններ ունեն համապատասխան մարմինները կոնկրետ գենդերային խտրականության հարցերով քննություն իրականացնելիս, ի՞նչ որոշումներ կարող են ընդունել, արդյո՞ք ստացված պատասխանը որևէ իրավական հետևանք կարող է առաջացնել գենդերային խտրականություն կիրառած սուբյեկտի համար և այլն:

Ինչ վերաբերում է դատական պաշտպանության իրավունքին, ապա դրա իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան դատավարական կանոններ և երաշխիքներ, որոնք, ելնելով խտրականության հարցերով գործերի քննության առանձնահատկություններից, պետք է ապահովեն անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է ապացուցման բեռի վերաբերյալ կարգավորումների բացակայությանը: Խտրականության հարցերով գործերի քննության ժամանակ, ընդունված միջազգային չափանիշների համաձայն, գործում է այսպես կոչված «խտրականության առկայության կանխավարկածի» կանոնը, համաձայն որի՝ խտրականության հետևանքով տուժած անձի կողմից իր նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ դիմում/հայց ներկայացնելու դեպքում (կասկածը հիմնավորող փաստերի կամ ապացույցների ներկայացման դեպքում) ենթադրյալ խախտում թույլ տված անձը կամ հաստատությունն է կրում ապացուցման բեռը: Այլ կերպ ասած, վերջինս պետք է հերքի խտրականության կանխավարկածը՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ ⁴⁶:

Ապացուցման բեռի այսպիսի բաշխվածությունը վերաբերում է ինչպես դատական մարմինների, այնպես էլ արտադատական մարմինների կողմից խտրականության հարցերով բողոքների քննարկմանը: Այս կանոնը սովորաբար սահմանվում է խտրականության, այդ թվում և գենդերային խտրականության հարցերը կարգավորող ազգային օրենքներում, ինչպես նաև համապատասխան կարգավորման է ենթարկվում դատավարական օրենսդրական ակտերում: Օրինակ՝ Լիտվայի «Տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների մասին» օրենքի 2-րդ1 հոդվածի համաձայն՝ «Ֆիզիկական անձանց դիմումներ և բողոքներ, ինչպես նաև սեռի հիմքով խտրականության հարցերով վեճեր

46. Մանրամասն տե՛ս՝ Comparative study on access to justice in gender equality and anti-discrimination law, Synthesis Report, February 2011, Point 3.2, http://ec.europa.eu/justice/gender-equality/files/conference_sept_2011/final_report_access_to_justice_final_en.pdf

քննելիս դատարանները կամ այլ իրավասու մարմինները պետք է ենթադրեն, որ ուղղակի կամ անուղղակի խտրականության փաստը տեղի է ունեցել: Այն անձը կամ հաստատությունը, որի դեմ ներկայացվել է բողոքը, պետք է ապացուցի, որ հավասար իրավունքների սկզբունքը չի խախտվել»⁴⁷:

ՀՀ Օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապացուցման բեռի վերաբերյալ որևէ իրավակարգավորում առկա չէ: Խտրականության հարցերով գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ իրավական կարգավորումներ չկան նաև համապատասխան դատավարական օրենսդրական ակտերում⁴⁸, ինչն էապես նվազեցնում է գենդերային խտրականության դեմ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աջակցություն ստանալու իրավունքը անձը կարող է իրականացնել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդհանուր կարգավորումների⁴⁹ համաձայն: Այնուամենայնիվ, ՄԻՊ-ը սեռի հիմքով խտրականության դեպքով պարտադիր կատարման ենթակա որոշում կայացնելու լիազորություն չունի, բացի այդ, ՄԻՊ-ի լիազորությունների իրականացումն առնչվում է միայն պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների խախտումներին: ՄԻՊ-ի աջակցությունը ստանալու պաշտպանության միջոցի արդյունավետությունը պայմանավորված է նաև խտրականության հետ կապված նյութաիրավական հիմքի ոչ լիարժեք կարգավորումներով: Հետևաբար, համապատասխան օրենսդրական կարգավորումների և քննարկվող Օրենքի կիրառման գործուն մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է գենդերային խտրականության հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից աջակցության իրավական արդյունավետությունը: Այս իրավական խնդրի մասին խոսվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում⁵⁰:

4. Արդյո՞ք այլ օրենսդրական ակտերում կատարվել են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից բխող օրենսդրական փոփոխություններ:

Գենդերային հավասարության de jure ապահովումը նշանակում է լիարժեք և համապարփակ օրենսդրական կարգավորումների ընդունում պետության կողմից, որը դրսևորվում է ոչ միայն տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության ապահովմանն ուղղված առանձին օրենքի ընդունմամբ, այլև այդ օրենքի իրականացմանն ուղղված իրավական մեխանիզմների

47. Լիտվայի օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://legislationline.org/topics/country/17/topic/7>

48. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

49. <http://www.ombuds.am/legislation/the-law-on-the-ombudsman.html?chapter=43>, գլուխ 4

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf>, 2015թ.-ի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, 295-304 էջեր, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf>

50. 2016թ.-ի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, 240-255 էջեր,

Նախատեսամամբ բոլոր այն օրենքներում, որոնք առնչվում են կամ կարող են առնչվել գենդերային հավասարության ապահովմանը:

ՀՀ համապատասխան օրենսդրական ակտերի⁵¹ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գենդերային հավասարության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել որևէ օրենքում, հետևաբար պետության կողմից չի դրսևորվել համալիր մոտեցում Օրենքի կիրառումն ապահովելու ուղղությամբ: Օրինակ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվության միջոցներով: Մինչդեռ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում որևէ կարգավորում այս կապակցությամբ առկա չէ: Համապատասխան փոփոխություններ չեն կատարվել նաև ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ գենդերային խտրականության արգելքի խախտման համար պատասխանատվության միջոցների առումով, ինչպես նաև համապատասխան դատավարական օրենսգրքերում՝ գենդերային խտրականության հարցերով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման ապահովման առումով, ինչի մասին արդեն խոսվեց վերևում:

5. Արդյո՞ք ընդունվել են համապատասխան ենթաօրենսդրական ակտեր «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովելու համար:

Գենդերային հավասարության de jure ապահովումը նաև ներառում է ենթաօրենսդրական մակարդակում համապատասխան ակտերի ընդունում գործադիր իշխանության մարմինների կողմից:

2013թ. օգոստոսի 2-ին ՀՀ վարչապետի N 686-Ա որոշմամբ հաստատվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը⁵²: Համաձայն սույն որոշման հավելվածի՝ որպես Օրենքի կիրարկումն ապահովող միջոցառում նախատեսված է «Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Այդուհանդերձ, մինչ օրս նշված ենթաօրենսդրական ակտը, ինչպես նաև Օրենքի կիրառումն ապահովող որևէ այլ ենթաօրենսդրական ակտ Կառավարության կողմից չի ընդունվել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ենթաօրենսդրական մակարդակում գենդերային հավասարության ապահովման իրավական մեխանիզմների բացակայությունը, ի թիվս այլոց, նվազեցնում է գենդերային հավասարության de jure ապահովման հնարավորությունը:

Ինչ վերաբերում է գենդերային հավասարության տարեկան միջոցառումների ծրագրին, ապա Օրենքի ընդունման պահին գործել է ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը: Կանանց

51. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք և այլն

52. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84731>

և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2016թ. միջոցառումների ծրագիր ՀՀ կառավարության կողմից չի մշակվել, 2016թ.-ի ընթացքում մշակվել է «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը», որը գտնվում է շրջանառության մեջ և դեռևս չի ընդունվել⁵³:

Այսպիսով, համապատասխան նորմատիվ իրավական ակտերի բացակայությունը հանգեցնում է, ի թիվս այլոց, Օրենքի կիրառման իրավական մեխանիզմների բացակայության, և դրանով պայմանավորված՝ Օրենքի նորմերի փաստացի կիրառման ապահովման արդյունավետության նվազման:

2.4. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի փաստացի կիրառման վերլուծություն

Գործնականում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի դրույթների փաստացի կիրառումը կախված է օրենսդրական նորմերի կիրառման իրավական և ինստիտուցիոնալ համապատասխան մեխանիզմների առկայությունից: Այս համատեքստում Օրենքը վերլուծելու և դրա իրավակարգավորումներին իրավական գնահատականներ տալու համար անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք Օրենքի կիրառման համար նախատեսված ինստիտուցիոնալ մեխանիզմները բավարար են Օրենքի փաստացի կիրառման համար:

Գենդերային հավասարության քաղաքականության իրագործման և ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ստեղծվում են համակարգված ձևով և բավականին բազմամակարդակ են: Գենդերային հավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմները եվրոպական պետություններում գործում են կենտրոնական/ֆեդերալ կառավարության, տարածքային և տեղական մարմինների, պառլամենտների և անկախ մարմինների մակարդակներում⁵⁴:

*Համաձայն «Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարականի՝*⁵⁵ Կառավարությունները պետք է ստեղծեն ինստիտուցիոնալ/ազգային մեխանիզմներ, որոնք խիստ կարևոր են նրանց կողմից սեռի հիմքով խտրականության վերացման և գենդերային հավասարություն հաստատելու իրենց պարտավորության կատարման համար: Կառավարության մակարդակում առկա չէ ինստիտուցիոնալ մեխանիզմների իդեալական օրինակ, որը կիրառելի է բոլոր երկրներում: Յուրաքանչյուր պետություն տարբերվում է իր տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական իրականությամբ, հետևաբար, ինստիտուցիոնալ մեխանիզմները արդյունավետ և կայուն համարվելու համար պետք է համապատասխանեն այդ իրականությանը և համատեղելի լինեն ազգային համատեքստի հետ:

53. ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ստացված պաշտոնական տվյալների համաձայն՝ հետազոտության կատարման պահին սույն միջոցառումների ծրագիրը դեռևս չի ընդունվել (մանրամասն տե՛ս Հավելված 2)

54. Մանրամասն տե՛ս Հավելված 3

55. https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805d4aa3, 68-72 կետեր

Այնուամենայնիվ, որպես գենդերային հավասարության հաստատմանն ուղղված պետության ռազմավարական նպատակների և հանձնառության, ինչպես նաև քաղաքական կամքի ցուցանիշներ, կարող են սահմանվել այդ մեխանիզմների ստեղծման և արդյունավետ գործունեության համար հետևյալ հիմնական պահանջները.

1. Գենդերային հավասարության մեխանիզմները պետք է լինեն քաղաքական ամենաբարձր մակարդակում, մասնավորապես՝ համապետական համակարգման միավորը պետք է լինի կառավարման բարձրագույն մակարդակում և ուղղակիորեն պատասխանատվություն կրի նախագահի կամ վարչապետի առջև,

2. Նախարարություններում և կառավարման այլ մարմիններում կամ տարածքային և տեղական իշխանության մարմինների համակարգում պետք է ստեղծվեն առանձին պատասխանատու միավորներ՝ դրանց կառուցվածքային բարձր մակարդակում,

3. Ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է ունենան անհրաժեշտ լիազորություններ, տեսանելիություն, քաղաքական ճանաչում, անհրաժեշտ ֆինանսավորում և մարդկային ռեսուրսներ, և նրանց գործողությունները պետք է լիարժեք աջակցություն ստանան քաղաքական իշխանության կողմից դրա իրացման տարբեր մակարդակներում,

4. Գենդերային մեյնսթրիմինգի (համալիր մոտեցում գենդերային հավասարության հիմնախնդրին) գործընթացի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար գենդերային հավասարության մարմնի ընդհանուր կառուցվածքը պետք է ներառի միջգերատեսչական/միջնախարարական կառուցվածք, ընդգրկի քաղաքականության տարբեր ոլորտներից բարձր մակարդակի ներկայացուցիչներ, որոնք ունեն որոշում կայացնելու իրավունք.

5. Ինստիտուցիոնալ մեխանիզմների մանդատը պետք է ունենա հստակ իրավական հիմք, որը պետք է հստակ սահմանի գործառույթներն ու պարտականությունները, այն պետք է անպայմանորեն ընդգրկի երկճյուղանի մոտեցում՝ գենդերային հավասարության աշխատանքում՝

Ա. Հատուկ քաղաքականություններ և գործողություններ, ներառյալ՝ պոզիտիվ միջոցներ ըստ անհրաժեշտության կանանց դերի բարձրացման և գենդերային հավասարության համար էական ոլորտներում.

Բ. Բոլոր քաղաքականություններում և ծրագրերում գենդերային մեյնսթրիմինգի գործընթացի աջակցություն, մոնիտորինգ, համակարգում և գնահատում.

6. Ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է զարգացնեն գենդերային փորձաքննություն կատարելու իրենց կարողությունները ու այդ նպատակով մշակեն գենդերային վերլուծության, գենդերային ազդեցության գնահատման ու գենդերային բյուջետավորման մեթոդներ, գործիքներ, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներ՝ գենդերային հավասարության և այդ մեթոդների ու գործիքների օգտագործման վերաբերյալ.

7. Ինստիտուցիոնալ մեխանիզմների գործառնության ծախսերի ռեսուրսները (անձնակազմ, սարքավորումներ, ինստիտուտի կանոնավոր

գործառնություն) պետք է ապահովի պետությունը, թեև առանձին հատուկ գործողություններ և ծրագրեր կարող են ֆինանսավորվել տարբեր աղբյուրներից.

8. Ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է հաստատեն ֆորմալ և ոչ ֆորմալ համագործակցային կապեր այլ հանրային ինստիտուտների հետ.

9. Ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է հաստատեն ֆորմալ և ոչ ֆորմալ համագործակցային կապեր մարդու իրավունքների և կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների, հետազոտական և ակադեմիական համայնքի, սոցիալական գործընկերների և այլ համապատասխան սոցիալական դերակատարների հետ, ինչպես նաև համապատասխան միջազգային և եվրոպական կազմակերպությունների հետ.

10. Գենդերային հավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է ստեղծվեն պառլամենտի մակարդակում, ինչպես նաև որպես անկախ և այլ մարմիններ, օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանը, որը կարող է ստանալ սեռի հիմքով խտրականության դեպքերի վերաբերյալ բողոքներ:

Օրենքը սահմանում է գենդերային հավասարության ապահովման համար պատասխանատու հետևյալ ինստիտուցիոնալ մեխանիզմները.

Ա. ՀՀ կառավարություն (14-րդ հոդված)

Բ. Պետական լիազոր մարմին (15-րդ հոդված)

Գ. Տեղական ինքնակառավարման մարմիններ (16-րդ հոդված):

ՀՀ կառավարություն իր լիազորությունների սահմաններում՝

1) իրագործում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը.

2) ապահովում է գենդերային հավասարության ապահովման քաղաքականության իրագործման ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության վերահսկողությունը.

3) մինչև յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի վերջը հաղորդում է ներկայացնում նախորդող տարում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման արդյունքների և Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ոլորտում ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով.

4) Միավորված ազգերի կազմակերպության «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայով սահմանված կարգով և ժամկետներում Գլխավոր քարտուղարին է ներկայացնում Կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ զեկույցը.

5) հաստատում է գենդերային հավասարության վրա պետական քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների ազդեցության գնահատման կարգը.

6) ստեղծում է իրավական և կազմակերպական գործուն մեխանիզմներ գենդերային հավասարության պետական քաղաքականության ապահովման և իրագործման համար:

Համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի՝ գենդերային քաղաքականության ոլորտում **պետական լիազոր մարմինը՝**

- 1) մշակում և իրականացնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովման միասնական պետական քաղաքականությունը.
- 2) ներկայացնում է առաջարկություններ գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորումը նախատեսելու վերաբերյալ.
- 3) ըստ անհրաժեշտության աջակցում է Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքներին.
- 4) ուսումնասիրում և ամփոփում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած ամենամյա տեղեկատվությունը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներկայացրած մշտադիտարկման արդյունքները և Հայաստանի Հանրապետության կառավարություն և ներկայացնում տեղեկատվություն ամփոփման արդյունքների վերաբերյալ.
- 5) կազմակերպում է գենդերային հավասարության ոլորտում տեղեկատվական, քարոզչական աշխատանքներ և «Գենդերային գիտելիքների հիմունքների վերաբերյալ» թեմայով վերապատրաստման դասընթացներ:

Օրենքի կարգավորումների համաձայն՝ **տեղական ինքնակառավարման մարմիններն** իրենց լիազորությունների շրջանակում միջոցառումներ են ձեռնարկում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ:

Գենդերային քաղաքականության իրականացման համար պատասխանատու հիմնական հաստատություններն են՝

1. Վարչապետին կից կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով զբաղվող խորհուրդը, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1152-Ա որոշմամբ՝ որպես ազգային մեխանիզմ, և համակարգում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովումը ⁵⁶:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը, որի մանդատը ներառում է գենդերային խնդիրների ուսումնասիրությունը, պետական ծրագրերի մշակումը, ինչպես նաև դրանց իրականացման մշտադիտարկումը և համակարգումը ⁵⁷:

Այս երկու կառույցների կարողությունները և լիազորությունները սահմանափակ են և ամբողջությամբ չեն արտացոլում Օրենքով սահմանված

56. <http://www.arlis.am/documentview.aspx?docID=94097>

57. Հայաստան, Երկրի գենդերային վիճակի գնահատում, Հայկական գիտահետազոտական հանգույց, հուլիս

կարգավորումները: Մասնավորապես, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը պահանջում է ստեղծել գենդերային հավասարության քաղաքականությունն իրականացնող (և վերջինիս իրականացման մշտադիտարկում անցկացնող) լիազոր մարմին, որը մինչ օրս ստեղծված չէ: Որպես այդպիսի լիազոր մարմին կարող է հանդես գալ Վարչապետին կից Կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով զբաղվող խորհուրդը՝ նրա լիազորությունների ընդլայնման դեպքում: 2014թ.-ի կեսին Խորհուրդը վերանայում էր իր կարողությունների հզորացման և արդյունավետության բարձրացման՝ Վարչապետին կից մշտապես գործող վարչության վերաժվելու հնարավորությունները, որը կգործի Հայաստանի գենդերային հավասարության ազգային մեխանիզմի զարգացման համատեքստում⁵⁸: Այս հարցը, սակայն, մինչ օրս պաշտոնական որևէ լուծում չի ստացել, ինչը հանգեցնում է Օրենքի նորմերի փաստացի կիրառման հնարավորության նվազեցման:

2011թ.-ին ՀՀ մարզպետարաններում մարզպետների կարգադրություններով ստեղծվել են Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա դրանց կառուցվածքում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման համար առանձին մասնագիտացված ստորաբաժանումներ չեն ստեղծվել:

Հարկ ենք համարում նշել, որ գենդերային հավասարության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների արդյունավետության գնահատումը սերտորեն փոխկապակցված է նաև Հավասարության հարցերով մարմնի բացակայության հետ, ինչն էլ պայմանավորված է ՀՀ-ում Խտրականության դեմ պայքարի մասին համապարփակ օրենքի բացակայությամբ⁵⁹: Այս խնդրին արդեն իսկ անդրադարձել ենք վերևում:

«Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների մասին» թիվ Rec(2007)17 հանձնարարականի վերոշարադրյալ պահանջների համատեքստում ՀՀ օրենքով նախատեսված ինստիտուցիոնալ մեխանիզմների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց համակցությամբ չեն կարող արդյունավետ կերպով ապահովել գենդերային հավասարության քաղաքականության իրականացումը, քանի որ դրանց սահմանման առումով համակարգային մոտեցում ցուցաբերված չէ, առկա չեն հստակ կարգավորումներ յուրաքանչյուր ինստիտուտի լիազորությունների և պարտականությունների վերաբերյալ, ստեղծված չէ համապետական մարմին լիարժեք լիազորություններով, և գործող ինստիտուցիոնալ մեխանիզմների ռեսուրսները բավարար չեն արդյունավետ գործունեության համար:

2. Արդյո՞ք գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունն արդյունավետ կերպով իրագործվում է Օրենքով սահմանված ինստիտուցիոնալ մեխանիզմների կողմից:

2015, էջ 10 http://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Arady/2012-2015/gender_2015.pdf

58. Վարչապետին կից Կանանց խորհրդի արդյունավետության բարձրացման մասին հանդիպում, հուլիսի 16, <http://www.gov.am/en/news/item/7435/>

59. Մանրամասն տե՛ս Ա. Ղազարյան, Վ. Գրիգորյան, «Արդյո՞ք անհրաժեշտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը», իրավագիտական հետազոտություն, Երևան, 2015, http://am.epfarmenia.am/wp-content/uploads/2014/07/Research-_Armenian_21.05.15.pdf

Համաձայն 2014թ.⁶⁰ և 2015թ.⁶¹ Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության՝ ՀՀ կառավարությունն իրականացրել է մի շարք միջոցառումներ կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության և այլ գերատեսչությունների, ինչպես նաև մի շարք մարզերի մարզպետարանների կողմից իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:

Այդ միջոցառումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրականացվել են կրթության, հանրային իրազեկման բարձրացման և գենդերային հիմնախնդիրների լուսաբանման, առողջապահության, կանանց սոցիալ-տնտեսական հնարավորությունների ընդլայնման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման, մշակութային և այլ ուղղություններով:

Այնուամենայնիվ, այդ միջոցառումները բխել և իրականացվել են կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2014 և 2015թթ. համապատասխան միջոցառումների տարեկան ծրագրերից, 2016 թ.-ին ՀՀ կառավարության կողմից այդպիսի ծրագիր չի հաստատվել, իսկ «կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը» մշակվել և դեռևս գտնվում է շրջանառության փուլում (ինչպես արդեն իսկ նշվել է վերևում):

Վերոնշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման պետական քաղաքականությունը կրում է ոչ պարբերական բնույթ, իրականացվում է հատվածաբար, չի ապահովվում համապատասխան իրավական բազայի շարունակականությունը, ինչը բացասաբար է ազդում Օրենքով սահմանված ինստիտուտների կողմից գենդերային հավասարության ապահովման քաղաքականության իրականացման արդյունավետության վրա:

3. Արդյո՞ք Օրենքն ապահովում է գենդերային մեյնսթրիմինգի արդյունավետ իրականացման համապատասխան իրավական բազա:

Օրենքի 3-րդ հոդվածում՝ օրենքում օգտագործվող հասկացությունների շարքում, տեղ է գտել նաև «գենդերային մեյնսթրիմինգը», որը սահմանվել է որպես **համալիր մոտեցում գենդերային հավասարության հիմնախնդրին (մեյնսթրիմինգ)**՝ ռազմավարություն, որի միջոցով կանանց և տղամարդկանց շահերը դառնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի այլ ոլորտներում իրավական ակտերի, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների մշակման, կատարման, մշտադիտարկման և գնահատման գործընթացի անքակտելի բաղադրիչը, որն ուղղված է կանանց և տղամարդկանց միջև անհավասարության վերացմանը:

60. Տես հավելված 4

61. Տես հավելված 5

Օրենքի հետագա կարգավորումներում գենդերային մեյնսթրիմինգը տեղ է գտել միայն 8-րդ հոդվածում, որտեղ պետական, տարածքային և համայնքային ծրագրերի և միջոցառումների ու զարգացման ռազմավարությունների մեջ գենդերային հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցումների ներդրումը սահմանվել է որպես գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

Գենդերային մեյնսթրիմինգը համարվում է գենդերային հավասարության փաստացի ապահովման գործընթացի անբաժանելի մասը և կանանց ու տղամարդկանց հավասարության հասնելու գործիք: Այս համատեքստում, եվրոպական չափանիշների համաձայն⁶², անհրաժեշտ է երկակի մոտեցում գենդերային հավասարության արդյունավետ ապահովման համար.

1. Հատուկ քաղաքականություններ և գործողություններ՝ ուղղված կանանց դերի բարձրացմանը, ներառյալ՝ պոզիտիվ գործողություններ,
2. Բոլոր քաղաքականություններում և ծրագրերում գենդերային մեյնսթրիմինգի ռազմավարության խթանում, մոնիտորինգ, համակարգում և գնահատում:

ԵՆ չափանիշների համաձայն⁶³՝ գենդերային հավասարության մեյնսթրիմինգը բոլոր քաղաքականություններում և ծրագրերում նշանակում է.

- որոշում կայացնելու իրավասությամբ օժտված բոլոր դերակատարների ներառում բոլոր քաղաքականությունների, ծրագրերի և գործողությունների պլանավորման, բյուջետավորման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացում՝ գենդերային հավասարության ներառում իրականացնելիս
- գենդերային փորձաքննության ներառում քաղաքականության գործընթացներում՝ որպես պարտադիր պահանջ քաղաքականություն մշակողների համար
- գենդերային հատկանիշով առանձնացված տվյալների և վիճակագրության օգտագործում և խթանում,
- գենդերային հավասարության բաղադրիչի ներառման ապահովում քաղաքականության բոլոր ոլորտներում և մակարդակներում՝ հաշվի առնելով, որ առաջին հայացքից ոչ վերաբերելի թվացող քաղաքականության ոլորտը կարող է ունենալ գենդերային անհավասարության (թաքնված) ասպեկտներ,
- բոլոր ծրագրերում ու գործողություններում բոլոր կանանց և

62. Գենդերային մեյնսթրիմինգի հետ կապված գործունեությունը Եվրոպայի խորհրդում, մարտ 2017թ. <https://rm.coe.int/16806b6c87>, Բոլոր քաղաքականություններում և միջոցներում գենդերային մեյնսթրիմինգի իրականացումը, ԵՆ գենդերային հավասարության ռազմավարություն <https://rm.coe.int/168064379a>

63. Գենդերային մեյնսթրիմինգ. Գաղափարական հիմունքներ, մեթոդոլոգիա և լավագույն պրակտիկա, Մեյնսթրիմինգի հարցերով մասնագետների խմբի վերջնական զեկույց,

<https://rm.coe.int/1680596135>, ԵՆ Նախարարների կոմիտեի թիվ REC(2007)13 հանձնարարական «Կրթության ոլորտում գենդերային մեյնսթրիմինգի մասին» https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d5287, թիվ REC(2008)1 հանձնարարական «Առողջապահության հարցերով քաղաքականություններում գենդերային տարբերությունների ներառման մասին» https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d4212, թիվ REC(2013)1 հանձնարարական «Գենդերային հավասարության և ՋԼՄ-ների մասին» https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805c7c7e, թիվ REC(2015)2 հանձնարարական «Սպորտում գենդերային մեյնսթրիմինգի մասին» https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805c4721

տղամարդկանց հավասար ներկայացվածության և ներդրման ապահովում,

- այս գործընթացում անհրաժեշտ ֆինանսների և մարդկային ռեսուրսների տրամադրում:

Գենդերային մեյնսթրիմինգի իրականացումը պետության կողմից, ինչպես տեսնում ենք, պահանջում է համալիր ու համակարգված մոտեցում: Սակայն իրավական կարգավորվածության բացակայությունը կամ ոչ լիարժեք կարգավորվածությունը հանգեցնում է գենդերային մեյնսթրիմինգի ոչ լիարժեք և ոչ արդյունավետ իրականացմանը:

4. Արդյո՞ք Օրենքում ամրագրված կարգավորումները ապահովում են իրավակիրառ պրակտիկայում նորմատիվ իրավական ակտերի գենդերային փորձաքննության արդյունավետ իրականացումը:

Օրենքի 18-րդ հոդվածը կարգավորում է նորմատիվ ակտերի գենդերային փորձաքննությունը, որն, ըստ օրենսդրական ձևակերպման, իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման, նորմատիվ իրավական ակտերում և դրանց նախագծերում գենդերային հավասարության խախտումների փաստերը բացառելու և վերացնելու, Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գենդերային հավասարության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխանեցնելու, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովելու սկզբունքը պահպանելու, կանանց և տղամարդկանց սեռի հատկանիշով խտրականությունից պաշտպանելու համար: Օրենքը սահմանում է գենդերային փորձաքննության իրականացման երկու եղանակ.

1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի ազդեցության գնահատում
2. Նորմատիվ իրավական ակտի փորձաքննություն:

Օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասը հղում է կատարում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին, ինչը նշանակում է, որ նորմատիվ իրավական ակտի նախագծի ազդեցության գնահատումը և նորմատիվ ակտի փորձաքննությունը պետք է իրականացվի տվյալ օրենքի կարգավորումներին համապատասխան:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, սակայն, չի կարգավորում նորմատիվ իրավական ակտի գենդերային փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները: Հետևաբար, օրենսդրական բացի արդյունքում գենդերային փորձաքննության իրականացման հասցեատերը մնում է անորոշ, իսկ օրենքով սահմանված դրույթը պրակտիկայում կիրառում չի ստանում: Հարկ է նշել, որ ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական դիրքորոշման համաձայն Արդարադատության նախարարությունը չի հանդիսանում գենդերային փորձաքննություն իրականացնող մարմին⁶⁴:

Ինչ վերաբերում է նորմատիվ իրավական ակտի նախագծի ազդեցության

64. Տես Հավելված 2

գնահատմանը, ապա ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշմամբ կարգավորված է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը: Ի կատարումն հիշյալ կարգի 4-րդ կետի՝ ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչները հաստատելու մասին» թիվ 34-Ա/1 հրամանը⁶⁵, որի 1-ին հավելվածի 3.1.2 կետում՝ որպես շահառուների վրա ունեցած ազդեցության բնութագրիչ նշված է «գենդերային հավասարությունը»: Սակայն, այլ ոլորտներում նորմատիվ ակտի նախագծի ազդեցության գնահատման առումով գենդերային հավասարության մասին կարգավորումներ չկան:

Ըստ էության, գենդերային փորձաքննության իրականացման վերաբերյալ իրավակարգավորումները թերի են և ոչ ամբողջական, առկա են չկարգավորված իրավահարաբերություններ, հետևաբար, Օրենքի, ինչպես նաև այլ օրենքների իրավակարգավորումները բավարար իրավական հիմք չեն ապահովում այս ինստիտուտի լիարժեք և արդյունավետ իրականացման համար:

5. Արդյո՞ք Օրենքն ապահովում է գենդերային խտրականության դեպքերի վերաբերյալ դիմումների քննության մեխանիզմ, ի դեմս նման գործառույթ իրականացնող լիազոր մարմնի:

Գենդերային խտրականության դեպքերի վերաբերյալ բողոքների քննությամբ սովորաբար զբաղվում են անկախ մարմինները, մասնավորապես, Գենդերային հավասարության հարցերով օմբուդսմենը, Հավասարության հարցերով տրիբունալը, Հավասար հնարավորությունների հարցերով օմբուդսմենը, Մարդու իրավունքների պաշտպանը՝ ի դեմս առանձին ստորաբաժանման, Քաղաքացու իրավունքների հարցերով հանձնակատարը և այլն⁶⁶:

Օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս առումով հատուկ ինստիտուցիոնալ մեխանիզմ նախատեսված չէ: Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ոլորտում պետական լիազոր մարմնի լիազորությունների ցանկում գենդերային հավասարության խախտման արդյունքում տուժած անձանց բողոքների քննություն իրականացնելու լիազորությունը տեղ չի գտել: Այդպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմ նախատեսված չէ նաև որևէ այլ օրենսդրական ակտով:

Այս հանգամանքը խիստ նվազեցնում է օրենքի արդյունավետ կիրառման հնարավորությունը, քանի որ սեռի հիմքով խտրական վերաբերմունք դրսևորված անձինք, թեև նյութաիրավական առումով խախտում են օրենքը, սակայն համապատասխան մեխանիզմների ու ընթացակարգերի բացակայության արդյունքում նրանց համար որևէ իրավական հետևանք և պատասխանատվություն չի առաջանում:

6. Արդյո՞ք առկա է Օրենքի դրույթների կիրառման դատական պրակտիկա:

Առաջադրված հարցին պատասխանելու համար համապատասխան հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ՝ խնդրելով հայտնել, թե «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ

65. Տե՛ս Հավելված 6

66. Տե՛ս Հավելված 3

քանի՞ դատական գործ է քննվել ՀՀ դատարաններում 2013 թվականից ի վեր և տրամադրել համապատասխան դատական ակտերի տեքստերը: Սույն հարցմանն ի պատասխան՝ ՀՀ դատական դեպարտամենտը, հղում կատարելով ՀՀ դատական օրենսգրքի 21.1 հոդվածին և ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Դատական գործերի դասակարգումը, դատական վիճակագրության՝ պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանելու մասին» թիվ 306-Ն որոշմանը, պատասխանել է, որ դեպարտամենտը այդ տեղեկատվության վերաբերյալ վիճակագրություն չի վարում ⁶⁷:

Համապատասխան դատական իրավակիրառ պրակտիկայի վեր հանման նպատակով կատարվել է DATALEX ⁶⁸ համակարգի միջոցով որոնում: Որոնման արդյունքում պարզվել է, որ ՀՀ դատարանները «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը կիրառել են խիստ սահմանափակ գործերով, և կիրառումը վերաբերել է ոչ թե կոնկրետ սեռի հիմքով խտրականության դեպքի քննությանը, այլ պարզապես որպես կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը սահմանող կարգավորում, հղում է կատարվել, օրինակ, Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետին ⁶⁹:

67. Տե՛ս Հավելված 2

68. <http://datalex.am>

69. ԱՐԱԴ/0554/02/13, http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=28710447624500935

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված իրավահամեմատական ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Օրենքով արգելված գենդերային խտրականության ձևերի ցանկը սպառնիչ չէ ինչպես խտրականության տեսակների, այնպես էլ դրսևորման ձևերի (ներառյալ՝ կրկնակի կամ եռակի խտրականության ձևերը) տեսանկյունից.
2. Գենդերային հավասարության խախտման դեպքում պատասխանատվության միջոցներ սահմանված չեն ինչպես «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ այլ օրենսդրական ակտերով (ՀՀ քրեական օրենսգիրք, Կարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք).
3. Օրենքով սահմանված պաշտպանության միջոցներն արդյունավետ չեն կարող կիրառվել օրենսդրական թերի կարգավորումների և այդ կարգավորումների բացակայության պատճառով.
4. Գենդերային հավասարության ապահովման ոլորտներին առնչվող օրենքներում նախատեսված չեն Օրենքի իրականացմանն ուղղված իրավական և կազմակերպական մեխանիզմներ:
5. Օրենքից բխող և դրա կիրառմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունումը գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվում է ոչ լիարժեք:
6. Առկա չեն հստակ կարգավորումներ Օրենքով նախատեսված ինստիտուցիոնալ մեխանիզմներից յուրաքանչյուրի լիազորությունների և պարտականությունների վերաբերյալ, և ստեղծված չէ լիարժեք մանդատ ունեցող գենդերային հավասարության հարցերով համապետական մարմին:
7. Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման պետական քաղաքականության իրականացման համար ապահովված չէ ենթաօրենսդրական իրավական բազայի շարունակականությունը:
8. Օրենսդրական թերի կարգավորումները չեն ապահովում գենդերային մեյնսթրիմինգի լիարժեք և արդյունավետ իրականացումը:
9. Գենդերային փորձաքննության իրականացման վերաբերյալ իրավակարգավորումները թերի են և ոչ ամբողջական, առկա են օրենսդրական բացեր:
10. Օրենքով նախատեսված չէ գենդերային հավասարության խախտման արդյունքում տուժած անձանց բողոքների քննություն իրականացնող մարմին և դրանց քննության ընթացակարգ:
11. Օրենքն իր կիրառումը չի գտել դատական իրավակիրառ պրակտիկայում, և դրանով պայմանավորված, նաև չի իրացվել անձի՝ Օրենքով սահմանված դատական պաշտպանության իրավունքը:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծության արդյունքում վեր հանված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.

1. Օրենքով ընդլայնել գենդերային խտրականության արգելված ձևերի և դրսևորումների ցանկը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին.
2. Օրենքում տարանջատել գենդերային խտրականության դրսևորումներն ըստ ոլորտների (աշխատանքը (զբաղվածությունը), կրթությունը, գիտությունը, սպառողների պաշտպանությունը, սոցիալական ապահովությունը, սպորտը, առողջապահությունը և այլն).
3. Համապատասխան օրենսդրական ակտերում սահմանել քրեական, վարչական և նյութական պատասխանատվության միջոցներ Օրենքի դրույթների խախտման, այն է՝ գենդերային խտրականություն դրսևորելու դեպքում.
4. Գենդերային խտրականության հարցերով դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար կատարել փոփոխություններ դատավարական օրենսգրքերում և նախատեսել նշված գործերով դատավարական հատուկ նորմեր (օրինակ՝ ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ)՝ ելնելով դրանց առանձնահատկությունից:
5. Ստեղծել գենդերային խտրականության ենթարկված անձանց բողոքների քննության և պարտադիր կատարման ենթակա որոշում կայացնելու լիազորությամբ օժտված մարմին:
6. Կատարել Օրենքից բխող փոփոխություններ Գենդերային հավասարության ապահովման ոլորտներին առնչվող համապատասխան օրենքներում:
7. Ապահովել Օրենքից բխող և դրա կատարմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունումը:
8. Ընդլայնել Վարչապետին կից կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով խորհրդի լիազորությունները՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան:
9. Համալիր մոտեցում ցուցաբերել գենդերային մեյնսթրիմինգի իրականացման հարցում և ապահովել դրա իրականացման իրավական բազան՝ միջազգային չափանիշներին համապատասխան:
10. Օրենքով սահմանել գենդերային փորձաքննություն իրականացնող մարմին և կարգավորել դրա իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները:

Հավելված 2. Պետական մարմիններից ստացած պաշտոնական պատասխաններ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Սկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Փաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № _____

№ 04/23.1/6084-17
« 20 » 06 2017 թ

ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՄԱՐ
ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ ՆՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մարգարյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի մայիսի 23-ի հարցման՝ կից ներկայացնում ենք 2014 և 2015 թվականներին նախարարության կողմից իրականացված միջոցառումների մասին տեղեկատվությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2016 թվականի տարեկան միջոցառումների ծրագիր» չի մշակվել: 2016 թվականի ընթացքում մշակվել է «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը», որը ներկայումս ՀՀ կառավարության սահմանած կարգով շրջանառվում է:

Առդիր 3 էջ:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Անժելինա Չիլինգարյան
011 597212



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. Փոստ armen.gevorgyan@justice.am

N 10/19.1/9078-17
« 30 » 05 2016 թ.

**ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ԿՈՈՒԼԻՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ 001, Ք. ԵՐԵՎԱՆ, Փ.ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ 119/2
ՀԵՌ. 094 488 480**

Հարգելի տիկին Մարգարյան

Ի պատասխան Ձեր՝ 2017 թվականի մայիսի 24-ի թիվ 12976-17 գրության՝ հայտնում եմ, որ գրությամբ բարձրացված հարցը վերաբերվում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածին, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նախագծը ենթակա է գենդերային փորձաքննության:

Միաժամանակ, ներկայացված գրությամբ պահանջվում է տեղեկատվություն 2013 թվականի հունիսի 29-ից մինչ օրս գենդերային փորձաքննության ենթարկված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի թվաքանակի վերաբերյալ՝ հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածին: Հիշյալ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ ակտերի մշակման ժամանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում ապահովելու նպատակով

պարտադիր պետական **իրավական** փորձաքննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում: Այսինքն, ՀՀ արդարադատության նախարարությունում նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթարկվում են բացառապես պետական **իրավական** փորձաքննության:

Մինևույն ժամանակ, ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշմամբ կարգավորված է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը: Ի կատարումն հիշյալ կարգի 4-րդ կետի՝ ընդունվել է ՀՀ **աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչները հաստատելու մասին» թիվ 34-Ա/1 հրամանը**, որի 1-ին կետով հաստատված 1-ին հավելվածի «Սոցիալական պաշտպանության բնագավառի իրավիճակի բնութագրիչները՝ ըստ առանձին ենթաօլորտների, ռազմավարական և շահառուների վրա ունեցած ազդեցությունների» սյունակի 3.1.2 կետում որպես շահառուների վրա ազդեցության բնութագրիչ հստակ նշված է **«Գենդերային հավասարությունը»:**

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ արդարադատության նախարարությունը գենդերային փորձաքննություն իրականացնող մարմին չէ՝ հարկ եմ համարում նշել, որ վերջինս չի տիրապետում հայցվող տեղեկատվության և չի հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն տեղեկատվություն տնօրինող:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Թագուհի Հարությունյան
Իրավական ապահովման վարչություն
Հեռ. (010) 59-40-68



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

« 31 » 05 2017թ.

N 726/ՄՄ/4757-17

ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՈՒԹՅԱՆ
ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ ՆՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2017 թվականի մայիսի 23-ի հարցման

Հարգելի տիկին Մարգարյան,

Կից ներկայացվում է տեղեկատվություն «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի» շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2014 և 2015 թվականներին արձանագրված հիմնական արդյունքների վերաբերյալ:

Տեղեկացնում ենք նաև, որ «Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության

հետ կապերի բաժին

հեռ.՝ 011 521524

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 46 41, ֆաքս. (374 11) 52 46 10

էլ. փոստ agro@minagro.am



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

0010, ք. Երևան, Վ. Մարգարյան 5, Հեռ: (00 37410) 511794, Ֆաքս: (00374 10) 511771

№ ԴԴ-4.2. Ն-3955

«08» հունիսի 2017թ.

**ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՍԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
(ք. Երևան, Հ. Էմինի փ. 119/2)**

Հարգելի՛ տիկին Մարգարյան,

Ի պատասխան ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին հասցեագրված Ձեր 23.05.2017թ. հարցման տեղեկացվում է, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից դատական վիճակագրությունը վարվում է ՀՀ դատական օրենսգրքի 21.1-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Դատական գործերի դասակարգումը, դատական վիճակագրության՝ պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և հրապարակման կարգը, վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանելու մասին» թիվ 306-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղեկացվում է, որ գրությամբ ակնկալվող տեղեկատվության վերաբերյալ վիճակագրություն ՀՀ դատական դեպարտամենտում չի վարվում:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՆԱՐԵԿ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Դատական վիճակագրության վարձան
և ամփոփման բաժին, հեռ. 51-17-94

Հավելված 3. Գենդերային հավասարության հարցերով ազգային ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ ⁷¹

Պետություններ	Կենտրոնական/Ֆեդերալ կառավարություն	Ապակենտրոնացված պետական/տեղական մարմիններ	Պառլամենտ	Անկախ և այլ մարմիններ
Ավստրիա	Կամսեց հանրային ծառայության հարցերով նախարարություն, Հավասար վերաբերմունքի հարցերով աշխատակիցներ և Հավասարության հարցերով աշխատանքային խմբեր նախարարություններում, Միջնախարարական աշխատանքային խումբ գենդերային մեխանիզմների հարցերով, Միջնախարարական աշխատանքային խումբ գենդերային բյուջետավորման հարցերով, Մասնավոր ոլորտում հավասար վերաբերմունքի հարցերով հանձնաժողով-3 սենատ, Հավասար վերաբերմունքի հարցերով ֆեդերալ հանձնաժողով- 2 սենատ	Հավասարվերաբերմունքի հարցերով աշխատակիցներ պրովինցիաներում, Հավասար վերաբերմունքի հարցերով հանձնաժողովներ պրովինցիաներում		Հավասար վերաբերմունքի հարցերով օբյեկտներ-3 բաժին. -Կամսեց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունք աշխատանքի ոլորտում. -Հավասար վերաբերմունք աշխատանքի ոլորտում անկախ էթնիկ ծագումից, կրոնից կամ դավանանքից, տարիքից կամ սեռական կողմնորոշումից, -Հավասար վերաբերմունք անկախ էթնիկ ծագումից այլ ոլորտներում և հավասար վերաբերմունք կանանց և տղամարդկանց նկատմամբ ասպրանքների և ծառայությունների հասանելիության ոլորտում, Հավասարության

71 Հավելվածի աղբյուր՝ https://www.unece.org/fileadmin/DAM/Gender/publication/UNECE_2010_Regional%20study_EU%20et%20a1.pdf

				<p>հարցերով աշխատանքային խումբ համալսարաններում</p>
<p>Բեղիհ</p>	<p>Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների հարցերով նախարար, Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ինստիտուտ-հանրային ինքնավար մարմին նախարարության հովանու ներքո, Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով միջկառավարական կոնֆերանս Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների հարցերով խորհուրդ-խորհրատական մարմին, 2007թ. Գեներային մեյնթրիմինգի վերաբերյալ ակտի իրականացման հարցերով միջգերատեսչական համակարգող խումբ, Մարդու իրավունքների թրաֆիկինգի դեմ պայքարի միջգերատեսչական համակարգող բաժին, Արտաքին հարաբերություններում կանանց և գաղափարների հարցերով հանձնաժողով-խորհրատական մարմին</p>	<p>Համայնքներում Հավասար հնարավորությունների հարցերով նախարարներ, Ֆլամանդական համայնք Հավասար հնարավորությունների հարցերով բաժին, Հավասար հնարավորությունների հարցերով հանձնաժողով միջգերատեսչական մարմին, - Բողոքների ներկայացման 13 կենտրոն Ֆրանսիական համայնք-Վալոնիա և Բրյուսել - Հավասար հնարավորություններ ի հարցերով վարչություն, Բրյուսել- Խտրականության դեմ հարցերով բյուրո - Վալոնիա- Տղամարդկանց և կանանց հավասարության հարցերով խորհուրդ, Գերմանական համայնք Համագործակցության, սոլիդարիզմի և ինտեգրման հարցերով խորհուրդ</p>	<p>Մենատում և Ներկայացուցիչների պալատում Խորհրատական հանձնաժողովներ</p>	<p>Խտրականության դեմ պաշտպանության հարցերով հանձնաժողով, Օմբուդսմեն</p>
<p>Բուդաբիա</p>	<p>Աշխատանքի և սոցիալական քաղաքականության հարցերով նախարարություն. - Ժողովրդագրական, ընտանեկան քաղաքականության և հավասար</p>	<p>Տեղական ինքնակառավարման մարմիններում համակարգողներ</p>		

	<p>ինտրավորությունների հարցերով վաչառություն, - գենդերային հավասարության և խտրականության դեմ հարցերով դեպարտամենտ, գենդերային հավասարության ազգային խորհուրդ- համակարգող և խորհրդատվական մարմին Նախարարություններում համակարգողներ մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ազգային հանձնաժողով</p> <p>Զբաղվածության ոլորտում գենդերային հավասարության և թիրախային խմբերի հարցերով խորհրդատվական հանձնաժողով</p>	<ul style="list-style-type: none"> Կանանց հարցերով բյուրոներ պրովինցիաներում և տարածքներում, որոնք զբեկույցներ են ներկայացնում պրովինցիաներում և տարածքներում Կանանց կարգավիճակի համար պատասխանատու Նախարարներին 		
Կանադա	<p>Կանադայի կանանց կարգավիճակի հարցերով մարմին- հիմնական համակարգող մարմին Առանցքային դեպարտամենտներում համակարգողներ</p>	<p>Գենդերային հավասարության հարցերով</p>		
Խորվաթիա	<p>Գենդերային հավասարության հարցերով կառավարական մարմին, Պետական կառավարման մարմիններում գենդերային հավասարության հարցերով համակարգողներ, Ընտանեկան բռնության գրեթե պաշտպանության հարցերով հանձնաժողով-խորհրդատվական մարմին Արդարադատության և հանրային կարգի հարցերով Նախարարության Կանանց իրավունքների հարցերով ազգային ապարատ, որը բաղկացած է՝</p> <ul style="list-style-type: none"> - Հավասարության հարցերով բաժնից, - Կանանց իրավունքների հարցերով ազգային ապարատի խորհուրդից, - Ազգային հանձնաժողովից. <p>Ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցերով խորհրդատվական հանձնաժողով.</p> <p>Զբաղվածության և մասնագիտական վերապատրաստումների ոլորտում գենդերային</p>	<p>Գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովներ/խորհուրդներ տեղական մակարդակում</p>	<p>Գենդերային հավասարության հարցերով պաշտամենտական հանձնաժողով</p>	<p>Գենդերային հավասարության հարցերով օբյեկտիվումեն</p>
Կիպրոս			<p>Տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների հարցերով կոմիտե</p>	<p>Կառավարման հանձնակատար/Կիպրոսի հավասարության հարցերով մարմին- բաղկացած երկու առանձին մարմիններից.</p> <ul style="list-style-type: none"> - Խտրականության դեմ հարցերով մարմին, - Հավասարության հարցերով մարմին

	<p>հավասարության հարցերով հանձնաժողով, Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի բազմամասնագիտական համակարգող խումբ</p>		<p>Մարդու իրավունքների և էթիկա փոքրամասնությունների հարցերով նախարարություն, Գենդերային հավասարության հարցերով ստորաբաժանում (Կառավարություն), Կանանց և տղամարդկանց հավասար ինտրավորությունների հարցերով խորհուրդ նախարարի նախագահությամբ, որն ունի երկու հանձնաժողով</p> <ul style="list-style-type: none"> - Ընտանեկան բռնության կանխարգելման կոմիտե, - Ընտանեկան և աշխատանքային ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար ինտրավորությունների հարցերով կոմիտե, <p>Մարդու իրավունքների խորհուրդ, Գենդերային հարցերով համակարգողներ բոլոր նախարարություններում</p>	<p>Մարդու իրավունքների հանրային պաշտպանության ազգային ինստիտուտ</p>	<p>Հավասար հնարավորությունների հարցերով մշտական հանձնաժողով-Պատգամավորների պալատ</p>
Գանիա	<p>Գենդերային հավասարության հարցերով նախարար (ևսև Զբաղվածության հարցերով նախարար)- Գենդերային հավասարության վարչություն Միջնախարարական աշխատանքային խմբեր. -Թրաֆիկինգ, -Գենդերային սեյսթիմինգ, -Ընտանեկան բռնություն</p>				<p>Հավասարության հարցերով խորհուրդ-Խտրականության բոլոր ձևերի վերաբերյալ բոլորների բնության իրավասություն ունեցող անկախ խորհուրդ</p>
Էստոնիա	<p>Գենդերային հավասարության հարցերով վարչություն- սոցիալական հարցերով նախարարության Ընտանիքի և սոցիալական քաղաքականության հարցերով գլխավոր քարտուղարի տեղակալի հովանու ներքո- Ընտանեկան քաղաքականության հարցերով բաժին Գենդերային հավասարության հարցերով վարչությունում, Գենդերային հավասարության խթանման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ</p>				<p>Գենդերային հավասարության և հավասար վերաբերմունքի հարցերով հանձնակատար, Արդարադատության կանցլեր</p>
Ֆինլանդիա	<p>Սոցիալական և առողջապահության հարցերով նախարարություն- Գենդերային հավասարության</p>				<p>Գենդերային հավասարության</p>

	բաժին		հարցերով խորհուրդ	հարցերով օմբուդան, կանանց և գենդերային հարցերով հետազոտությունների բաժիններ համալսարաններում կանանց հարցերով հետազոտությունների համալսարանական ցանց
Ֆրանսիա	Աշխատանքի, սոցիալական հարաբերությունների, ընտանիքի, սոփոարիզմի հարցերով նախարարության և Սոփոարիզմի հարցերով Պետական բարոտուղարի իովանու ներթո-կանանց իրավունքների և հավասարության հարցերով Ծառայություն, Մասնագիտացված մարմիններ-կենտրոնական ապարատի գործընկերներ - Հավասարության հարցերով կենտրոն, - Տղամարդկանց և կանանց մասնագիտական հավասարության հարցերով բարձրագույն խորհուրդ, - Սեռական հարցերով տեղեկատվության, ընտանիքի պլանավորման և ընտանեկան հարցերով կրթության բարձր խորհուրդ - կանանց դեմ բռնության հարցերով ազգային հանձնաժողով	26 պատվիրակ ռեզիդենտներում և 75 պատվիրակ համայնքային մակարդակում	Սենատում և Ազգային ժողովում կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների հարցերով պառլամենտական պատվիրակություններ	Խորակալություններում պայքարի և հավասարության հարցերով բարձր մարմին - Գործադիր բյուրո - Խորհրդատվական և կոմիտե Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդում կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների հարցերով պատվիրակություն
Գերմանիա	Ընտանեկան հարցերով, քաղաքացիների, կանանց և երիտասարդության հարցերով ֆեդերալ նախարարություն	Հավասարության հարցերով բաժիններ Նահանգների կառավարությունների նախարարություններում, Հավասար հնարավորությունների և կանանց հարցերով ներկայացուցիչներ մոնիցինգայլ մակարդակում	կանանց հարցերով, քաղաքացիների, կանանց և երիտասարդության հարցերով կոմիտե Բունդեսբազում, կանանց և երիտասարդության հարցերով կոմիտե Բունդեսառում	Գենդերային հարցերով կենտրոն – կառավարության կողմից ֆինանսավորվող կենտրոն Բեռլինի Հյուսիսի համալսարանում, որն աջակցում է ֆեդերալ կառավարության կողմից գենդերային մեյնսթրիմինգի իրականացմանը
Հունաստան	Ներքին գործերի նախարարությունում Գենդերային հավասարության հարցերով գլխավոր քարտուղար,	Գենդերային հավասարության հարցերով Ռեզիդենտ	Մարդու իրավունքների և գենդերային	Մարդու իրավունքների հարցերով ազգային

	<p>Կանանց և տղամարդկանց հարցերով ազգային կոմիտե՝ Ներքին գործերի նախարարի նախագահությանը- խորհրդատվական մարմին, Հավասարության հարցերով բաժիններ նախարարություններում, Հատուկ բաժանմունք Զբաղվածության և սոցիալական պաշտպանության հարցերով նախարարությունում, Գենդերային հավասարության հարցերով հետազոտական կենտրոն, որը վերահսկվում է Ներքին գործերի նախարարության կողմից</p>	<p>կոմիտեներ 13 վարչական շրջանում, Գենդերային հավասարության հարցերով հետազոտական կենտրոնի ռեզիդենսայլ բաժիններ, Հավասարության հարցերով բաժիններ մունիցիպալ մակարդակում</p>	<p>հավասարության հարցերով հատուկ կոմիտե</p>	<p>կոմիտե, Օմբուդսմեն- Գենդերային հավասարության հարցերով բաժին</p>
<p>Հունգարիա</p>	<p>Հասարակությունում Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով բաժին – Սոցիալական և աշխատանքի հարցերով նախարարության Հավասար հնարավորությունների պետական բարտուղարի Հավասար հնարավորությունների ղեկավարտամենտի բաժին, Հասարակությունում Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով խորհուրդ- խորհրդատվական մարմին</p>	<p>Ռեզիդենսայլ ճգնաժամային ծառայության կենտրոն</p>	<p>Մարդկանց իրավունքների, փոքրամասնություններ ի, բաղադրացիական և հոգևոր հարցերով կոմիտեի Գենդերային հավասարության հարցերով ենթահանձնաժողով</p>	<p>Հավասար վերաբերմունքի հարցերով մարմին Հավասար վերաբերմունքի հարցերով խորհրդատվական խորհուրդ</p>
<p>Իսլանդիա</p>	<p>Սոցիալական հարցերով և սոցիալական անվտանգության հարցերով հանձնաժողով- Գենդերային հավասարության կենտրոն, Գենդերային հավասարության հարցերով բողոքների կոմիտե, Գենդերային հավասարության հարցերով խորհուրդ- խորհրդատվական մարմին Գենդերային հավասարության հարցերով ներկայացուցիչներ նախարարություններում</p>	<p>Գենդերային հավասարության կոմիտեներ տեղական մարմիններում</p>	<p>Գենդերային հավասարության հարցերով հատուկ կոմիտե</p>	<p>Հավասարության հարցերով մարմին- անկախ պետական մարմին, Հավասարության հարցերով տրիբունալ – անկախ մարմին</p>
<p>Իռլանդիա</p>	<p>Արդարադատության, հավասարության և իրավական բարեփոխումների հարցերով նախարար Հավասարության, հաշմանդամության և առողջապահության հարցերով նախարարի աջակցությամբ, Գենդերային հավասարության հարցերով բաժին նախարարությունում, Արդարադատության, հավասարության և իրավական բարեփոխումների հարցերով նախարարությունում կանանց ղեկ բռնության և մարդկանց թրաֆիկինգի հարցերով ազգային ջանքերի համակարգման բաժիններ,</p>	<p>Արդարադատության, հավասարության, պաշտպանության և կանանց իրավունքների միացյալ կոմիտե և դրա առանձին կոմիտե</p>	<p>Արդարադատության, հավասարության, պաշտպանության և կանանց իրավունքների միացյալ կոմիտե և դրա առանձին կոմիտե</p>	<p>Հավասարության հարցերով մարմին- անկախ պետական մարմին, Հավասարության հարցերով տրիբունալ – անկախ մարմին</p>

	<p>Գենդերային հավասարության հարցերով համակարգողներ նախարարություններում, Միջգերատեսչական կոմիտե, որը պատասխանատու է Կանանց հարցերով ազգային ռազմավարության իրականացման համար</p> <p>Կանանց հարցերով ազգային ռազմավարության մոնիտորինգի կոմիտե՝ Հավասարության հարցերով նախարարի նախագահությանը,</p> <p>Ազգային զարգացման պլանավորման գենդերային հավասարության բաժին</p>	<p>Ռեգիոնալ և պրովինցիալ կառավարությունների Աշխատանքի, առողջության և սոցիալական քարտեզավորությունների նախարարության Հավասարության հարցերով կանանց խորհրդատուների պրովինցիալ և ռեգիոնալ ցանց</p>		<p>Տնտեսության և աշխատանքի հարցերով ազգային խորհրդի գենդերային հարցերով աշխատանքային խումբ - Պարլամենտի, կառավարության և ռեգիոնների համար խորհրդատվական մարմին տնտեսական և աշխատանքային հարցերով</p>
